
**ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (1268 թ.) ՇՈՒՐՁ**

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ Ա. Է.

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ամենակարևոր հարցերից են արտաքին քաղաքականությունը և դիվանագիտության պատմությունը, թեև առ այսօր տվյալ ոլորտները լուրջ գիտական ուսումնասիրության չեն արժանացել: Հայտնի է, որ XIII դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում միջազգային իրավիճակը փոփոխվել էր: Մի կողմից թուլացել էին Բյուզնդյանի սելջուկները և Բյուզնդյան կայսրությունը, մյուս կողմից հոգեվարքի մեջ էին խաչակրաց արշավանքները: Բացի այդ, օր օրի թուլանում էին նաև Արևելքում հաստատված խաչակրաց իշխանությունները, որոնց մի մասի հետ Կիլիկյան Հայաստանն ուներ բարիդրացիական հարաբերություններ: Դրանց փոխարեն նշյալ ժամանակաշրջանում Արևելքում մնացին հիմնականում երկու հզոր ուժեր: Առաջինը մոնղոլներն էին, որոնք դեռևս XIII դ. առաջին քառորդին գրավեցին հսկայածավալ տարածքներ և մոտեցան Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններին: Հայոց թագավորությանը ոչինչ չէր մնում անել, քան զինական համագործակցության մեջ մտնել նրանց հետ և դրանով փրկել երկիրը: Երկրորդ ուժը Եգիպտոսի սուլթանությունն էր, որը պետության հիմնադրումից (1250 թ.) կարճ ժամանակ անց դարձավ ինչպես մոնղոլների և ֆրանկների, այնպես էլ հայերի թշնամին: Պետք է նաև նշել, որ թեև հայ-մամլուքյան հարաբերությունների պատմությունը մասամբ ուսումնասիրել են մասնագետները, սակայն մինչև այժմ պատշաճ ուշադրության չեն արժանացել 1268 թ. Անտիոք քաղաքում կնքված հայ-մամլուքյան հաշտության պայմանագիրը և դրա բովանդակային դրույթները¹:

Եգիպտոսի սուլթանության զորքերը 1266-ին ավերիչ արշավանք ձեռնարկեցին Կիլիկիայի հայկական թագավորության դեմ²: Բացի այդ, Մառիի լեռնանցքում

¹ **Հովհաննիսյան Ա.**, Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությունները Եգիպտոսի սուլթանության հետ 1250-1375 թթ., Ե., 2008: **Canard M.** Le Royaume d'Arménie-Cilicie et les mamelouks jusqu'au traité de 1285 (Revue des Etudes Armeniennes, t. IV, Paris, 1967); **Holt P.** The Mamluke Diplomacy 1260-1290, Treaties of Baybars, Qalavun with Christian Rulers, Brill, 1995, <http://books.google.am> (վերջված է 05.04.2010); **Stewart A.** The Armenian Kingdom and the Mamluks, War and Diplomacy During the Reigns of Hetum II, 1289-1307, Brill, 2001.

² **Գրիգոր Ակնեցի**, Պատմութիւն թաթարաց, Յերուսաղէմ, 1974, էջ 53-54: Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (այսուհետև՝ Արաբական աղբյուրները), կազմեց Հ. Նալբանդյանը, Ե., 1965, էջ 272: **Հովհաննես Դարդել**, Ժամանակագրութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 22-23: Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 163: **Bar Habbraeus**, The Chronography, London, 1932, p. 446; Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 51: *Bibliothèque des Croisades*, t. 4, Paris, 1829, p. 504-507. **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 246: **Մամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 150, 221-222: **Makrizi**, Histoire des sultans mamelouks, t. I, Paris, 1837, part II, p. 34-40. Մանր ժամանակագրություններ 13-18-րդ

տեղի ունեցած վճռորոշ ճակատամարտում հայկական զորքը պարտություն կրեց: Սպանվեց արքայորդի Թորոսը, իսկ մյուս որդին շատերի հետ գերեվարվեց Եգիպտոս: Երկու տարի անց մամլուքյան զորքերը, գրավելով Անտիոքը, հաշտության պայմանագիր կնքեցին հայկական թագավորության հետ: Կարևոր ենք, որ հայ-մամլուքյան պատերազմի և հաշտության բանակցությունների մասին խոսում են ոչ միայն հայ, այլ նաև արևելյան պատմիչները: Այսպես, Մառիի պատերազմի մասին տեղեկություններ են տալիս նշանավոր պատմիչներ Վարդան Արևելցու³, Հեթում Ախտուց Տիրոց և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները⁴, ԺԳ դարի հիշատակարանները⁵, Աբուլ Ֆարաջը⁶, սակայն վերջիններս բավարարվում են միայն նշելով ռազմական գործողությունները և կոտորածները՝ ոչինչ չասելով հայ-մամլուքյան հաշտության պայմանագրի մասին: Նշյալ պայմանագրի մասին սահմանափակ տեղեկությունների ենք հանդիպում Գրիգոր Ակներցու⁷, Սմբատ Սպարապետի⁸ և Սամվել Անեցու⁹ աշխատություններում: Եթե Սամվել Անեցին խոսում է միայն Լևոն արքայորդու վերադարձի մասին, ապա Սմբատ Սպարապետը և Գրիգոր Ակներցին մեզ տեղեկացնում են, որ պայմանագիրը կնքվել է այն պայմանով, որ սուլթանի մտերիմ ընկերոջը՝ հայոց արքան մոնղոլական գերությունից հետ ուղարկեց Եգիպտոս, իսկ սուլթանն էլ դրա դիմաց ազատեց Լևոն արքայորդուն և մյուս գերիներին. «Եւ իբրեւ դարձաւ սուլտանն յԱնտիոք առ ի գնալ յԵգիպտոս՝ առաքեաց առ թագաւորն Հեթում յղել պանդանտ որդւոյ իւրոյ Լևոնի, զի արձակեցէ գնա, և յորժամ տեսցէ զորդին իւր՝ ապա առաքեցէ առ նա զընկերակիցն իւր Սնդուրաշխարհ. և թագաւորն արար վաղվադակի: Եւ առաքեցին պաղանտ զՕշին քեռորդի արքային Հեթմոյ, և զորդի եղբօր նորա Հեթմոյ զԸռեմունդ, և զորդի Կոստանդեայ թագաւորահօրն զՎասակ տէր Ճանճոյն: Եւ յորժամ հասին

դարերի, հ. Ա, Ե., 1951, էջ 97: Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 474: Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն հայոց, Մ., 1860, էջ 68: Այդ մասին տես նաև Սուրբաքյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 434: Միքայելյան Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Ե., 2007, էջ 344-347: Семенова Л. Салах ад-дин и мамлюки в Египте, М., 1966, с. 172-174, 181-182. Mutafian C. The Brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisian and S. Payaslian, California, 2008, p. 107.

³ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 163-164:

⁴ Հեթում Ախտուց Տիրոց և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները (Պատմաբանասիրական հանդես, 1963, N 4, էջ 190):

⁵ Սաթևոսյան Ա., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, Ե., 1986, էջ 130:

⁶ Bar Habraeus, նշվ. աշխ., էջ 446-447:

⁷ Գրիգոր Ակներցի, նշվ. աշխ., էջ 53-54:

⁸ Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 220-251:

⁹ Սամվել Անեցի, նշվ. աշխ., էջ 150, 220-221:

* Սոնկուր ալ-Աշկարին սուլթան Բեյբարսի մտերիմ ընկերն էր, որը տարիներ առաջ փրկել էր նրա կյանքը: Դառնալով Եգիպտոսի սուլթան՝ Բեյբարսը մի քանի անգամ դիմել էր մոնղոլներին՝ խնդրելով, որ իր ընկերոջն ազատեն գերությունից, սակայն մերժվել էր: Այժմ եկել էր հարմար պահը, քանի որ հայերը մոնղոլների դաշնակիցներն էին:

առ սուլտանն, պարոնն Հայոց Լեւոն ազատեալ եկն յաշխարհն Կիլիկիոյ բազում ընծայիւք... և ապա առեալ զՄնդուրաշխարհն՝ Լեւոն իշխանն որդի Սմբատայ սպարապետի և տարաւ առ սուլտանն...»¹⁰: Բնչպէս նկատում ենք, հեղինակների տրամադրած վկայությունները շատ կցկտուր են և չեն կարող էական դեր ունենալ պայմանագրի բացահայտման համար: Կարծում ենք՝ պատմիչները փորձել են պարզապէս ներկայացնել պայմանագրի հիմնական մասը՝ չկարևորելով մյուս դրույթները: Կամ էլ հայոց արքայազնի վերադարձը այնքան մեծ իրադարձություն է եղել երկրում, որ հեղինակները մյուս դրույթների մասին պարզապէս չեն իմացել: Քննարկվող խնդրի շուրջ մի փոքր ավելի տեղեկությունների ենք հանդիպում Հեթում պատմիչի¹¹ և մեկ այլ ժամանակագրի աշխատությունում¹²: Այստեղ հեղինակները նշում են, որ Հեթում արքան վերադարձրեց սուլթանի ընկերոջը՝ Սոնկուր ալ-Աշկարին, և զիջեց Դարպսակի ամրոցը, ինչպէս նաև երկու այլ բերդեր. «Եւ այսպէս սուլթանն դարձոյձ զարքայորդին, և ընկալաւ զմտերիմն իւր. և թագաւորն հայոց դարձոյձ սուլթանին զամուրն Դարպսակ, և զայլ երկու ամրոցս ետ քակեալ ըստ խնդրոյ սուլթանին»: Թե որոնք էին այդ երկու ամրոցները, դժբախտաբար, պատմիչները չեն անդրադառնում՝ հետազոտողներին թողնելով անլուծելի իրավիճակում: Բնչպէս նկատում ենք, հայկական աղբյուրների վկայությունները բավական աղքատիկ են նշյալ խնդրի պարզաբանման համար: Հիշյալ թեմայի մասին տեղեկությունների ենք հանդիպում նաև արևելյան, մասնավորապէս արաբական աղբյուրներում: Ընդ որում, քննարկվելիք հարցի շուրջ փաստեր կան Աբուլ Ֆիդայի ժամանակագրության մեջ, որտեղ հեղինակը նշում է, որ Սոնկուր ալ-Աշկարը հանձնվեց սուլթան Բեյբարսին, ինչպէս նաև Դարպսակի ամրոցը և մյուս բերդերը, բացի Բեհեսնիից, որը մեծ դժվարությամբ հայերը կարողացան պահել իրենց հովանավորության ներքո¹³: Իր հերթին սուլթանն էլ ազատեց Սսի տեր Հեթումի որդի Լեւոնին և ուղարկեց Կիլիկիա¹⁴: Փաստորեն, Աբուլ Ֆիդայի ժամանակագրությունում հաղորդումները նույնպէս սակավ են և գրեթե չեն տարբերվում Հեթում պատմիչի և մանր ժամանակագիրների տեղեկություններից: Բացի Աբուլ-Ֆիդայից, հայ-մամլուքյան հարաբերություններին և մասնավորապէս Անտիոքում կնքված հայ-մամլուքյան պայմանագրին անդրադարձել են ևս երկու արաբ հեղինակներ, որոնց հաղորդած վկայությունները չափազանց կարևոր են: Այսպէս՝ պայմանագրի մասին վկայությունների ենք հանդիպում Եգիպտոսի սուլթանի քարտուղար Իբն արդ ալ-Չահիրի արաբերեն

¹⁰ Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 250:

¹¹ Հեթում պատմիչ, նշվ. աշխ., էջ 52:

¹² Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 74:

¹³ Արաբական աղբյուրներ, էջ 237:

¹⁴ Նույն տեղում:

բնագրում¹⁵, որտեղ հեղինակը հետևյալ պայմանագրային դրույթներն է հաղորդում. «Կիլիկիայի հայկական թագավորությունը Եգիպտոսի սուլթանությանն էր հանձնում կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք բերդեր՝ Դարպսակ, Բեհեսնին, Ռաբան, Մարգաբան, ինչպես նաև ստորակա դառնալու հավաստիացումներ: Բացի այդ, Ջեյհուն գետը համարվելու էր երկու պետությունների միջև ընկած ընդհանուր սահման, և գերությունից ազատվելու էին և Սոնկուր ալ-Աշկարը և Լևոն արքայորդին¹⁶: Ինչպես նկատում ենք, ի տարբերություն նախորդ հեղինակների, Իբն աբդ ալ-Ջահիրին ճշտությամբ հաղորդում է այն բոլոր ամրոցների անունները, որոնք հանձնվելու էին Եգիպտոսի սուլթանությանը: Ընդ որում, նա միակն է պատմիչներից, որ հստակ նշում է, թե ինչպիսին պետք է լինի Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև ընկած սահմանը: Թեև նրա մի շարք հաղորդումները բացառիկ կարևոր են մեր ուսումնասիրության համար, այնուամենայնիվ, այնտեղ առկա է կասկածելի մի հաղորդում: Խոսքը վերաբերում է հեղինակի այն տեղեկությանը, թե, իբր, հայկական թագավորությունը համաձայնվեց դառնալ Եգիպտոսի սուլթանությանը ստորակա: Սակայն հայկական թագավորությունը դժվար թե համաձայնեց դառնալ ենթակա Եգիպտոսին, քանի որ վերջիններս Կիլիկյան Հայաստանի գլխավոր դաշնակից մոնղոլական պետության թշնամիներն էին: Ավելին, ապագա տասնամյակների պատմությունն էլ ցույց տվեց, որ նման բան չի եղել: Պարզապես Իբն աբդ ալ-Ջահիրին, որը սուլթանի քարտուղարն էր, ցանկացել է գերազնահատել մամլուքների և սուլթան Բեյբարսի հաղթանակը: Վերջապես, ուսումնասիրվող խնդրի մասին խոսում է նաև Եգիպտոսի սուլթանի արքունի պատմիչը՝ Մաքրիզին, որի աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն Եգիպտոսի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի, այլև խաչակիրների, մոնղոլների և Մերձավոր Արևելքի պատմության ուսումնասիրման համար: Խոսելով Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագրի մասին՝ հեղինակը նշում է, որ արքան վերադարձնելու էր Բեհեսնին ու Դարպսակը և բոլոր այն ամրոցները, որոնք գրավվել էին 1259-1260 թթ. հայ-մոնղոլական զորքերի կողմից սիրիական արշավանքների ժամանակ»¹⁷: Ընդ որում, ամրոցները պետք է վերադարձվեին այն վիճակում, ինչպես որ եղել էին նախկինում, այսինքն՝ հարստություններով հանդերձ: Հայերն էլ իրենց հերթին ազատելու էին Սոնկուր ալ-Աշկարին, իսկ Սուլթան Բեյբարսը՝ Լևոնին և մյուս գերիներին¹⁸: Որոշվեց նաև, որ սկզբում վերադարձվելու էին ամրոցները, այնուհետև ազատվելու էր Լևոնը և հետո՝

¹⁵ Իբն աբդ ալ-Ջահիր, Բեյբարսի կյանքը, թարգմանված է արաբերենից, Ալ-Ռիյադ, 1976, էջ 327-337:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Մաքրիզի, Մամլուք սուլթանների պատմություն, հ. Ա, Կահիրե, 1958, թարգմանված արաբերենից, հ. Ա, էջ 552-565, նույնը ֆրանսերենով՝ Makrizi, Histoire des Sultans Mamelouks, t. I, part II, Paris, 1837, p. 54.

¹⁸ Նույն տեղում:

Մոնկուր ալ-Աշկարը¹⁹: Ի վերջո, Հեթում արքան երդվեց պայմանագրով²⁰: Ինչպես նկատում ենք, հայ և օտարազգի պատմիչներից պայմանագրի մասին ամենաընդարձակը խոսում է Մաքրիզին: Մասնավորապես առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի այն վկայությունը, որ վերադարձվելիք ամրոցները պետք է տրվեին նախկին վիճակով, ներառյալ՝ հարստությունները: Եվ այս դրույթը շատ տրամաբանական է: Հատուկ ուշադրության է արժանի Մաքրիզիի այն տեղեկությունը, թե ինչ հաջորդականությամբ պետք է կատարվեին գերիների փոխանակությունը: Այս տեղեկությունը կարևորվում է նրանով, որ հայկական և օտար սկզբնաղբյուրների մեջ այն միակն է, որ հստակ արձանագրել է, թե ինչ վիճակում և ինչ հաջորդականությամբ պետք է վերադարձվեին սահմանային ամրոցները: Այժմ տեսնենք, թե ինչ են այդ մասին խոսում ժամանակակից գիտնականները: Այսպես, մի շարք գիտնականներ (Ա. Մուքիսայան²¹, Ա. Գալստյան²², Թ. Բոեյզ²³ և Ջ. Պտուկյան²⁴) խոսում են 1266 թ. մամլուքյան զորքերի դեպի Կիլիկյան Հայաստան արշավանքի մասին, սակայն որևէ կարծիք չեն հայտնում հաշտության պայմանագրի մասին: Կարծում ենք, որ պայմանագրին հեղինակների չանդրադառնալը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանցից յուրաքանչյուրը փորձել է հետազոտել իրեն հետաքրքրող թեման, այլ ոչ թե հայ-մամլուքյան հարաբերություններն ու պայմանագիրը խորությամբ: Հայ-մամլուքյան պատերազմի մասին տեսակետ է հայտնում նաև Ժ. Մորգանը՝ նշելով միայն, որ կնքվեց հաշտության պայմանագիր հայերի համար շատ ծանր գնով²⁵: Թե որն էր այդ ծանր գինը, ինչ կորուստներ էր ունենալու հայոց թագավորությունը պայմանագրի կնքումից հետո, հեղինակն այդ մասին չի խոսում: Հետազոտվող խնդրին են անդրադարձել նաև անվանի գիտնականներ Ս. Բոռնազյանը և Լ. Պուլը, որոնք նշում են, որ բացի Մոնկուր ալ-Աշկարի և Լևոնի փոխանակությունից, հայերը Եգիպտոսի սուլթանությանը զիջեցին Դարպսակը և մյուս բերդերը, բացի Բեհեսնիից²⁶: Ինչպես նկատում ենք, այս կարծիքները թերի են, քանի որ ոչ միայն չեն նշում, թե որոնք են մյուս բերդերը, որոնք զիջվել էին Եգիպտոսի սուլթանությանը, այլև ուրիշ նոր խոսք չեն հայտնում պայմանագրի բովանդակային դրույթների մասին: Նշյալ պայմանագրին անդրադարձել է նաև նորագույն շրջանի հետազոտող Ա. Մոյուարտը, սակայն այս հեղինակը

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

²¹ Մուքիսայան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., 1978, էջ 77:

²² Գալստյան Ա., Մմբատ Սպարապետ, Ե., 1961, էջ 36-37:

²³ Boase T. The Cilician Kingdom of Armenia, London, 1978, p. 26.

²⁴ Պտուկյան Ջ., Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 12-13:

²⁵ Jacques de Morgan, The History of the Armenian People. From the Remotest Times to the Present Days, Boston, 1965, p. 237.

²⁶ Բոռնազյան Ա., Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Ե., 1976, էջ 714: Lane-poole S. A History of Egypt in the Middle Ages, London, 1901, p. 267.

հիմնականում մեջբերում է կատարում արաբ ժամանակագիր Աբուլ Ֆիդայի հաղորդումից: Կարծում ենք, հեղինակի ոչ մանրագնին հետազոտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտնականի հիմնական խնդիրն է եղել քննելու Հեթում Բ-ի ժամանակաշրջանի հայ-մամլության հարաբերությունները, այլ ոչ թե XIII դ. 60-ական թվականների: Հետաքրքիր է նաև մամլուքների պատմության ճանաչված հետազոտող Ս. Խոտկոյի կարծիքը, ըստ որի՝ այդ պայմանագրով Կիլիկյան Հայաստանը դարձավ մամլության պետության վասալը²⁷: Կարծում ենք՝ հետազոտողը մի փոքր չափազանցել է պայմանագիրը և մամլուքների հաղթանակը, քանի որ հայկական թագավորությունը նման քայլ չէր կարող անել: Չի բացառվում, որ վերջինս օգտվել է Իբն արդ ալ-Ջահիրի վկայությունից՝ չկատարելով խոր վերլուծություն: Ապագա տասնամյակների պատմությունը և հայ-մոնղոլական դաշնակցությունը նույնպես հաստատում են մեր կարծիքը: Հայոց թագավորության տարածքային կորուստների մասին ավելի մանրամասնորեն խոսում են ճանաչված գիտնականներ Մ. Կանարը²⁸, Գ. Միքայելյանը²⁹, Ռ. Գրոսսե³⁰ և դ'Օհսոնը³¹: Հետազոտողները նշում են, որ թշնամուն տրվեցին Դարպասկը, Մարգաբանը, Ռաբանը, Շի էլ-Հադիդը և այլ տարածքներ: Ճիշտ է, այս աշխատություններում հստակ տրվում են հանձնված տարածքները, սակայն որևէ այլ խոսք պայմանագրի մասին չի փոխանցվում: Նշված խնդրի մասին տեղեկություններ է տրամադրում նաև Կ. Մուրաֆյանը³², ըստ որի՝ հայերը ստիպված էին թշնամուն հանձնել պահանջվող բերդերը, ինչի շնորհիվ Լևոնը ազատվեց գերությունից, իսկ Կիլիկյան Հայաստանը զրկվեց Ամանոսի և Սիրիայի սահմանում նվաճած բոլոր տարածքներից: Փաստորեն, Կ. Մուրաֆյանը նորոպի ոչինչ չի ասում և գրեթե կրկնում է նախորդ հետազոտողների տեսակետները: Վերջապես տվյալ խնդրին անդրադարձել է նաև Մ. Օրմանյանը, ըստ որի՝ բացի զիջված բերդերից հայերը խոստացան իսկել նաև իրենց կապերը և դաշնակցությունն Արևմուտքի հետ: Կարծում ենք, որ հեղինակի տեսակետը բավական հետաքրքիր է և կարող է ճշմարիտ լինել: Երբ Եգիպտոսի սուլթանության զորքերը 1275 թ. արշավեցին դեպի Կիլիկիա, ապա արշավանքի պատճառ էին համարում այն, որ հայերը խախտել են 1268 թ. պայմանագիրը: Մատնանշվեց այն հանգամանքը, որ իրենք կրկին դիմել են ավրոպական երկրներին՝ խաչակրաց արշավանք սկսելու նպատակով: Բացի այդ, Կիլիկյան Հայաստանի պատմության գրեթե ողջ ժամանակաշրջանում՝ հայ-մամլության հարաբերությունների ժամանակ, միշտ էլ հայերին զգուշացնում էին, որ վերջիններս գերծ մնան դեպի

²⁷ Хотко С. Черкесские и адыгские правители Египта и Сирии в 13-18 веках, Майкоп, 1995, с. 173-174.

²⁸ Canard M., նշվ. աշխ., էջ 236:

²⁹ Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 207:

³⁰ Grousset R., Histoire des Croisades, et du Royaume franc de Jerusalem, Vol. I, Paris, 1934, p. 636.

³¹ C. D' Ohsson. Histoire des Mongols Depius Techinquiz-Khan, t. III, Amsterdam, 1852, p. 424.

³² Մուրաֆյան Կ., նշվ. աշխ., էջ 437:

Արևմուտք դաշնակցությունից և չիրահրեն խաչակրաց նոր արշավանք: Շատ հավանական է, որ պայմանագրի այս կարևոր դրույթը պարզապես դուրս է մնացել պատմիչների ուշադրությունից:

Այսպիսով, միջնադարյան աղբյուրների ընձեռած վկայությունները և մասնագիտական գրականության քննությունը թույլ է տալիս մեզ ներկայացնել Անտիոքում Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագիրը: Ըստ որի՝

ա. Կիլիկյան Հայաստանը Եգիպտոսի սուլթանությանն էր հանձնում սահմանային մի շարք կարևոր բերդեր՝ Դարպասկը, Ռաբանը, Մարգաբանը, Շի էլ-Հադիդը.

բ. վերոնշյալ տարածքները պետք է վերադարձվեին նախկին վիճակով, այսինքն՝ հարստություններով հանդերձ.

գ. հայերը պետք է ազատ արձակեին մոնղոլական զերության մեջ գտնվող Սոնկուր ալ-Աշկարին.

դ. սուլթան Բեյբարսը պետք է ազատ արձակեր Լևոն արքայորդուն և Մառիի ճակատամարտում գերի ընկած մյուս հայ գերիներին.

ե. Ջայհան գետը համարվելու էր երկու պետությունների միջև ընկած ընդհանուր սահման.

զ. նախ վերադարձվելու էին նշյալ տարածքները եգիպտացիներին, որից հետո սուլթան Բեյբարսը ազատ էր արձակելու Լևոնին և մյուս գերիներին, և վերջում ազատ էր արձակվելու Սոնկուր ալ-Աշկարը.

է. Կիլիկյան Հայաստանի դեկլարությունը պարտավորվեց խզել իր կապերը Արևմուտքի հետ և չդիմել խաչակրաց արշավանք սկսելու խնդրանքով.

ը. երկու պետությունների միջև հաստատվում էին խաղաղություն և բարեկամական հարաբերություններ:

Պայմանագրի բովանդակության դրույթների մասին քննությունը ավարտելուց հետո կցանկանայինք որոշակի անդրադարձ կատարել նաև պայմանագրի կնքման թվականին: Հայտնի է, որ հետազոտողների ճնշող մեծամասնությունը նշյալ պայմանագիրը թվագրում է 1268 թվականով, սակայն Ս. Խոսկոն³³ և դ'Օհսոնը³⁴ այն նշում են 1267-ով: Խնդրի պարզաբանման համար առաջին հերթին պետք է ճշտել մամլության զորքերի արշավանքի հստակ տարեթիվը: Ապացուցված փաստ է, որ այն տեղի է ունեցել 1266 թ. օգոստոսին, ինչն էլ վկայում են ինչպես հայ, այնպես էլ օտար պատմիչները³⁵: Եթե հայտնի է, թե երբ է դեպի Կիլիկիայի

³³ Хорко С., նշվ. աշխ., էջ 173-174:

³⁴ С. Д' Охсон, նշվ. աշխ., էջ 424:

³⁵ Վարդան Արևելցի, նշվ. աշխ., էջ 169: Հեթում պատմիչ, նշվ. աշխ., էջ 51-52: Վահրամ Ռաբունի, նշվ. աշխ., էջ 225-226: Իբն աբդ ալ-Ջահիր, նշվ. աշխ., էջ 327-337: Մխիթար Այրիվանեցի, Պատմություն հայոց, Մ., 1860, էջ 68: Արաբական աղբյուրները, էջ 272: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, էջ 341-343: Bar Habraeus, նշվ. աշխ., էջ 445-446:

հայկական թագավորություն տեղի ունեցել մամլուքյան արշավանքը, ապա մնում է պարզել նաև, թե ինչքան ժամանակ են գերության մեջ մնացել Լևոն արքայորդին և մյուսները: Այս առնչությամբ կարևոր տեղեկություն կա Վահրամ Ռաբունու աշխատության մեջ, որտեղ հեղինակը նշում է, որ Լևոն արքայորդին Եգիպտոսում գերության մեջ մնացել է մեկ տարի և տասն ամիս.

« Եւ Եգիպտոս ` յառաջացեալ
Եւ անդանօր ` ի բանտ ածեալ...
Ամի մի և տասն ամիս կացեալ,
Իյ Եգիպտոս ` պանդխտացեալ:
Ապա երդմամբ ` դաշինս եղեալ,
Ընդ Լէոնի ` որ անդ եղեալ.
Նովաւ ի հայր ` նորին յղեալ,
Եւ զհաշտութիւն ` ընդ կատարեալ:
Իսկոյն զնա ` պատռուով հանեալ,
Մեծաւ փառօք և արձակեալ»³⁶:

Եթե Եգիպտոսի սուլթանության արշավանքը դեպի Կիլիկիայի հայկական թագավորություն տեղի է ունեցել 1266 թ. օգոստոսին, ապա դրան գումարելով մեկ տարի և 10 ամիս՝ ստանում ենք 1268 թվականի հունիսը:

Այսպիսով, պետք է նշել, որ Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև Անտիոք քաղաքում կնքված հաշտության պայմանագիրը կնքվել է 1268 թվականին:

К ВОПРОСУ О ДОГОВОРЕ, ЗАКЛЮЧЕННОМ МЕЖДУ КИЛИКИЙСКИМ АРМЯНСКИМ ЦАРСТВОМ И ЕГИПЕТСКИМ СУЛТАНАТОМ (1268 г.)

ОГАНЕСЯН А. Э.

Резюме

Заключенный в 1268 году в городе Антиохий армяно-мамлюкский договор о мире впервые рассматривается и исследуется с точки зрения содержательной стороны его положений и пунктов. Договор был заключен именно в 1268, а не в 1267 году. Особое место занимают комментарии впервые опубликованных пунктов договора. Работа над комментариями основана на сведениях средневековых армянских и иностранных источников. В частности, особый интерес представляют сведения по пунктам о территориальных потерях армянского государства и новых границах Киликийской Армении.

³⁶ Վահրամ Ռաբունի, նշվ. աշխ., էջ 225-226: